գերլով զինքն ՚ի Նարբոնս խրկած է, այն կողմերու պահպանութիւնն իրեն յանձնելով:

—Դամասկոսի Մեհմ. Ալի փաշային ՚ի Պէյրութ կը գտնուի բարձրագոյն հրամանու, որ ընդհանուր ժողով պիտի գումարուի յիշեալ նահանգին ժողովրդոց վիճակին վերայօք քննութիւններ ընելու նպատակաւ, և այն ժողովոյն անդամներն արդէն իւրաքանչիւր քաղաքներէ մէկ մէկ կամ երկու անձինք ժողովրդեան քուէարկութեամբն ընտրուելով հոն հասած են: Երուսաղէմի երեք Քրիստոնեայ ազգաց կողմէն ընտրուեցան տէրը Աթոռոյս Արաբերէն լեզուի գրագիր Խաչատրեան պարոն Յովհաննէս և Յունաց կողմէն Լատիֆ Էֆէնտին, նոյնպէս Յոպպէէն և Գազայէն մէկ մէկ անձինք քուէարկութեամբ ընտրուելով արդէն մեկնեցան ՚ի Պէյրութ, և ամսոյս 18 ին հոն հասնելով Մուսթաֆայի փաշային ներկայացան: Կ՚ըսուի թէ նահանգական ընդհանուր ժողովը մինչեւ բաւական 10 օրէ տեւէ, այսինքն մինչեւ ի 24 դեկտեմբերի:

## ՆՈՐԱՏԻՊ ՄԱՏԵԱՆՔ

### ՅՈՎՀԱՆՆՈՒ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
### ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ

Յիշեալ գիրքը ասոր Աթոռոյս մէջ 1843 ին տպուած և սպառուած ըլլալով, այս անգամ նորէն տպուեցաւ մեծագոյն զգուշութեամբ: Հինգ օրինակ ձեռագրաց հետ համեմատուելով գրեթէ առաջին տպին սրբագրեալը կրնայ համարիլ: Բայց անկէ գլուխները բաժնուած է հանդերձ վերնագրութեամբք. և օրինակաց գլխաւոր տարբերութիւններն ևս իւրաքանչիւր էջին ներքեւ նշանակուած են:

### ՄԵՆՏՈՐ ՄԱՆԿԱՆՑ
### ԿԱՄ
### ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆ ՃԱՄԲԱՆ

Աշխարհաբառ լեզուաւ ընտիր բարոյական գիրք մի է նորահաս պատանեաց յատկացեալ, որ գեղեցիկ օրինակներով կ՚ուսուցանէ առնել զմտութիւնն և սիրել զառաքինութիւնը:

Կը պարունակէ 350 էջ: Այս գիրքը կրնայ միանգամայն իբր դասատետր ծառայել դպրոցաց մէջ, թէ հայերէն ընթերցանութեան և թէ բարոյական դաստիարակութեան համար:

### ԳԻՐՔ ՈՍԿԵՂԻՆԻԿ
### ՍԱՂՄՈՍԱՑ ՈՒՂՂԻ ՀՐԱՒ

Այս ընտիր երկասիրութիւնն, ուրու ամբողջութիւնն ներկայ տարւոյս Սիոնի մէջ մաս առ մաս հրատարակուելով և առաջիկայ դեկտեմբեր ամսոյն մէջ պիտի վերջանայ, ի խնդրոյ ոմանց հեռաւոր բանասիրաց ազգիս՝ առանձին ևս տպագրութեամբ ի լոյս ընծայուեցաւ:

—Յայտնի է ուսումնասէր ընթերցողաց որ քանի մի տարիէ իվեր սկսուած է հին և նոր կտակարանի ամբողջ ցանկը յօրինելու, և արդէն լրացած ըլլալով՝ որոշուած է մամլոյ յանձնել, եթէ հաստատութիւնք բարեհաճի ձեռնտու ըլլալ անոր ծախուցը, կամ բաժանորդագրութեամբ և կամ առանձին առատաձեռն օգնութեամբ: Աշխատութիւնս պատրաստ է միանգամայն և յօժար՝ ուրիշ կարեւորագոյն գրեանք ևս ի լոյս ընծայել, եթէ բարեսէր հաստատութիւնք չզլանան իւր օժանդակութիւնը, բաց որում որոշեալ ձեռագիրք բաւական գումարի պէտս ունին, և Ս. Աթոռս իւր արդի նեղ վիճակին մէջ անբաւական է յանձնէ հոգալ նոյն ծախսը:

ՀՐԱՏԱՐԱԿՉԱՑ ՏԵՍՉՈՒԹԻՒՆ

ՊԱՏՐԻԱՐՔ Ս. ԱԹՈՌՈՅՍ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ԵՍԱՅԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

digitised by A.R.A.R.@